# Արձանագրություն N 3

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ/2022/Հ-44>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան

12. 05. 2022թ.
ժամը 16:00

**Մասնակցում էին՝**

- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ս. Սեդրակյան (հանձնաժողովի նախագահ),
- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Գ. Մարտիրոսյան (գնահատող անդամ)
- ՀՀ ոստիկանության ՏՎ նյութական արժեքների հաշվառման և գույքի ապահովման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Մ.Գասպարյան (գնահատող անդամ)
- ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Հ.Ասատրյան (հանձնաժողովի քարտուղար)։

**Օրակարգ՝**

ՀՀ ոստիկանության կարիքների համար **մեդալների և կրծքանշանների** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ/2022/Հ-44 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. **Տեղեկություն կատարված շտկման մասին.**

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ/2022/Հ-44 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ին տրվել էր 1 աշխատանքային օր իրական շահառուների վերաբերյալ հավելվածը ներկայացնելու համար։ Մասնակցի կողմից շտկումը կատարվել է ժամանակին, հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար։

**2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

**Հանձնաժողովը որոշեց՝**

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ/2022/Հ-44 ծածկագրով ընթացակարգ ընտրված մասնակից ճանաչել Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ին։

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ։

**Անգործության ժամկետի ավարտից հետո** Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ ԲԲԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | Ս. Սեդրակյան |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | Գ. Մարտիրոսյան |
| | Մ. Գասպարյան |
| *Քարտուղար՝* | Հ. Ասատրյան |